Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 461 - Ա
որոշման

«ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՆՈՐ ՄՈԴԵԼԻ ՆԵՐԴՐՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	**Ծրագրի նպատակը**	Շարժական բեմ-բեռնատարի ձեռքբերում Արենի համայնքում կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների ոլորտում մատուցվող ծառայությունների բարելավման նպատակով: Ներդրվող մոդելը հնարավորություն կընձեռի բարելավել մշակութային կյանքի հասանելիությունը համայնքի բոլոր բնակավայրերում, խթանել համայնքային մասնակցությունն ու ակտիվությունը և ամրապնդել սոցիալական միասնականությունը՝ բնակիչների փոխադարձ կապերի զարգացման միջոցով: Շարժական բեմ-բեռնատարը անհատույց կփոխանցվի Արենի համայնքին:
2.	**Ծրագրի բարեգործական որակման նպատակը**	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	**Բարեգործը**	Սերբիայի Հանրապետության կառավարությունը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետությունում Սերբիայի դեսպանության:
4.	**Ծրագիրը կատարողը**	Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակ (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Պ. Ադամյան փողոց 14, ՀՎՀՀ՝ 02522088):
5.	**Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը**	Հայաստանի Հանրապետություն, Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, բնագավառ՝ համայնքային զարգացում:
6.	**Ծրագրի բյուջեն**	65,000,000 դրամ

7.	**Բարեգործություն ստացողը**	Հայաստանի Հանրապետություն, Վայոց ձորի մարզ, Արենի համայնք (Հայաստանի Հանրապետություն, Վայոց ձորի մարզ, գյուղ Արենի 15 փողոց, 2 փակուղի, շենք 6, ՀՎՀՀ՝ 08914384):
8.	**Ծրագրի իրականացման տևողությունը**	2025 թվականի հուլիսի 26-ից մինչև 2025 թվականի նոյեմբերի 30-ը:
9.	**Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը**	Շարժական բեմ-բեռնատարի ձեռքբերում և ներմուծում՝ 65,000,000 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2025 թվականի հուլիսի 26-ից մինչև 2025 թվականի նոյեմբերի 30-ը: Շարժական բեմ-բեռնատարը կփոխանցվի Արենի համայնքին, հաշվեկշռում ներառվելուց հետո համայնքը պատասխանատու կլինի շարժական բեմ-բեռնատարի շահագործման և սպասարկման համար:
10.	**Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը**	Շարժական բեմ-բեռնատարի՝ հագեցած անհրաժեշտ տեխնիկա-սարքավո-րումներով (ծալվող շարժական բեմ, լուսային և ձայնային համակարգեր, այդ թվում՝ բարձրախոսներ, լուսադիոդային համակարգ, Լեդ (LED) էկրան, պահեստային պարագաներ և այլն) ձեռքբերում և ներմուծում 65,000,000 դրամ արժողությամբ:
11.	**Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը**	Նախատեսված չեն:
12.	**Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ**	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Վայոց ձորի մարզի Արենի համայնք
13.	**Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը**	Հաշվետվությունների մշակում և ներկայացում Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի ծրագրային թիմին, ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի կողմից ծրագրային հաշվետվության ներկայացում Հայաստանի Հանրապետությունում Սերբիայի դեսպանությանը: Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական

		ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

14.07.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ